ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐՄՈՍ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
65	Արմոս ՍՊԸ	Արմոս ՍՊԸ	Կոշիկ տակտիկական՝ ձմեռային Բաղկացած է երեսամասից, միջնատակից, կարվող ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից։ Երեսամասը պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի քրոմապատ, քողարող(կանաչ գույնի) կաշվից՝ հղկված հատիկավոր մակերեսով, «թավշյա» ծածկույթով և անջրաթափանց գործվածքի համադրությամբ։ Կաշին՝ հղկված հատիկավոր մակերեսով և «թավշյա» ծածկույթով, կաշվի բոլոր խիտ հատվածներում ֆիզիկա-մեխանիկական և ֆիզիկա-քիմիական ցուցանիշների առումով պետք է համապատասխանի ներքոնշյալ նորմերին։ Քթամասը, ճտքերը, հետնամասը և լեզվակի վերին եզրը պատրաստված են 1.2-1.4մմ հաստությամբ կաշվից։ Ճտքերի վերնամասը, լեզվակը և լեզվակի փակ փականը պատրաստված են 1.2±0.5մմ հաստությամբ գործվածքից, որը ներսից մշակված է անջրաթափանց ոչ հյուսված նյութով։ Ճտքավոր կոշիկի ճտքերի և լեզվակի վերնամասը մշակված է դեպի ներս կարով, իսկ տվյալ հատվածների ներսամասը պատրաստված է տրիկոտաժե գործվածքից խաչաձև հյուսվածքով, հաստությունը՝ 3.0±0.3 մմ։

			Միջնատակը կողամասերում և լեզվակի փակ փականի վերնամասում պատրաստված է մեմբրանով լամինացված թաղանթից՝ 1.9±0.5 մմ հաստությամբ: Ճտքերի, լեզվակի վերին եզրով, երեսամասի և միջնատակի միջև տեղադրված է սպունգի շերտ (Պենոպոլիուրեթան)՝ 6.0±0.5 մմ հաստությամբ, խտություն՝ 60±3 կգ/մ³: Յուրաքանչյուր կոշիկ պետք է ունենա՝ կապիչի օղակներ՝ 7*2 հատ (տեքստիլից ժապավենով (գոտու ժապավեն, հյուս), լայնությունը՝ 10.0-14.0 մմ), 6 մետաղական կեռիկներ՝ պատված պաշտպանիչ շերտով և ամրացված մետաղական գամերով: Հետնամասում՝ ժապավենից պատրաստված օղակ՝ ուղղահայաց կարով: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր, սինթետիկ քիմիական մանրաթելից, որի որակը կապահովի կոշիկի սահուն և արագ քուղավորումը, տրամագիծը՝ 5.0մմ: Քուղերի ծայրերը պետք է ունենան ջերմամշակում՝ (թափանցիկ թաղանթ)՝ չքանդվելու համար: Քուղերի երկարությունը՝ 160–170 սմ: Կոշիկի վերնամասի բոլոր դետալները ամրացված են 2-ական կարով, ամրությունը՝ առնվազն 115 Ն/սմ՝, բացառությամբ լեզվակի փակ փականի, լեզվակի և լեզվակի վրա կարվող դետալի: 43 չափսի յուրաքանչյուր կիսաճթքավոր կոշիկի զույգի քաշը պետք է լինի 800 գրամ *2 (±5%) : Քթամասը և կրնկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում քթամասը 1.3-1.5մմ, իսկ կրնկամասը՝ 1.8-2.0մմ հաստությամբ: Կոշիկի քթամասի և կրնկամասի մնացորդային դեֆորմացիան ոչավել քան 1.0 մմ՝ համաձայն ԳՕՍՏ 9135-ի: Դետալները իրար միացվում և կարվում են սինթետիկ թելով: Ներբանը երկշերտ է, պատրաստված պոլեուրետանի և մաշվածադիմացկուն ռետինի համադրությամբ: Ներբանը պետք է ամրանա կոշիկի վերնամասին ձուլման եղանակով: Ներբանի խզման բեռնվածությունը առնվազն 90 Ն/սմ՝ համաձայն ԳՕՍՏ 9292-ի: Կարվող ներդիրը պատրաստված է ոչ հյուսված կառուցվածք ունեցող գործվածքից՝ (պոլիվինիլացետատ), հաստությունը՝ 2.0±0.5 մմ: Բաղադրությունը՝ պոլիեսթեր 85±5%, պոլիպրոպիլեն 15±5%: Հանովի-դնովի ներդիրը անատոմիական է, շնչող, երկշերտ, 3.0+0.5 մմ

			հաստությամբ: Բաղկացած է՝ 1-ին շերտ՝ մաշվածադիմացկուն ոչ հյուսված նյութ (բաղադրությունը՝ պոլիեսթեր 100%, մակերեսի խտությունը՝ 120±20.0 գ/մ2), 2-րդ շերտ՝ ոչ հյուսված մանրաթելային գործվածքից՝ բաղադրություն՝ պոլիեսթեր 100%, մակերեսային խտություն՝ 400±30.0 գ/մ2): Ճտքավոր կոշիկի ներսամասի մեմբրանի դետալների կարերի հերմետիկությունը ապահովելու համար պետք է օգտագործել ժապավեն (երկբաղադրիչ), հաստությունը 22.0±1.0 մմ: Բաղադրիչների զանգվածային մասնաբաժինը՝1 բաղադրիչ՝ տրիկոտաժե գործվածք (բաղադրությունը՝ պոլիամիդ 100%); 2 բաղադրիչ՝ թաղանթ (բաղադրությունը՝ պոլիուրեթան 100%): Ընդհանուր մակերեսային խտությունը՝ 210±15 գ/մ2: Պատրաստի արտադրանքի չափերը պետք է լինեն՝ Կոշիկի բարձրության չափումը կատարվում է ներքին կողմից՝ վերին եզրից մինչև ներբան՝ Բարձրությունը 43 չափի համար կազմում է՝ 150 մմ - 200 մմ (թույլատրելի շեղումը՝ ±5.0 մմ): Ընդհանուր խոնավության տոկոս % ԳՕՍՏ 938.1 10.0–16.0; Քրոմի օքսիդի տոկոս % ԳՕՍՏ 938.3 10.0–16; Օրգանական լուծիչով հեռացվող ԳՕՍՏ 938.53.7–10.0; Օրգանական լուծիչով հեռացվող նյութեր (առանց պոլիմերների), % ԳՕՍՏ 938.5 3.7–10.0 ; Ձգման դիմադրության սահման, ՄՊա ԳՕՍՏ 938.11 ≥ 1.4 ; Երկարացման տոկոս՝ 10 ՄՊա լարվածությամբ ԳՕՍՏ 938.11 25.0–40.0% ; Գոլորշու թափանցելիություն, % / մգ/սմ²ժ ԳՕՍՏ 938.17 ≥ 25% / ≥ 5.0 ; Ներկի նստեցման կայունություն՝ – չոր շփում ≥ 4 բալ: ԳՕՍՏ 938.29 Կազմ՝ % պոլիամիդ ԳՕՍՏ ISO 1833 100% Մաշվածության դիմադրություն, ցիկլ ԳՕՍՏ 18976 ≥ 400 ; Ոչ հյուսված շերտի բաղադրություն՝ պոլիեսթեր ԳՕՍՏ Р 57027 100% Արտադրվում են 37-47 չափսերի: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 8-10 զույգ, արկղերը պետք է լինեն պիտակավորված (նվազագույնը 8սմ*15սմ չափսի), որի վրա պետք է տեսանելի նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման

			/շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով 20 օրացուցային օրվա ընթացքում: Փոխարինման ժամկետը սկսվում է հաշվարկվել պատվիրատուի կողմից գրավոր տեղեկացվելու հաջորդ աշխատանքային օրվանից: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АРМОС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
65	ООО Армос	ООО Армос	Ботинки тактические зимние Состоит из верха, межподошвы, вшитой вставки, съемной стельки и подошвы. Верх изготовлен из хромированной кожи крупного рогатого скота с камуфляжным (зеленым) покрытием, шлифованной лицевой поверхностью с «бархатистым» эффектом и влагонепроницаемой тканевой вставкой. Кожа с шлифованной поверхностью и бархатистой текстурой по всем плотным участкам должна соответствовать нижеуказанным физико-механическим и физико-химическим нормативам. Мыс, берцы, задник и верхний край язычка изготовлены из кожи толщиной 1.2-1.4 мм. Верхняя часть берцев, язычок и клапан язычка изготовлены из ткани толщиной 1.2±0.5 мм с внутренним влагонепроницаемым нетканым покрытием. Верх берцев и язычка обработаны внутренним швом, внутренняя часть этих элементов выполнена из трикотажной ткани с перекрестным плетением, толщиной 3.0±0.3 мм. Подкладка в боковых частях и на верхней части клапана язычка выполнена из ламинированной мембранной пленки толщиной

			1.9±0.5 мм. Между берцами, верхней частью язычка, внешним верхом и подкладкой размещен слой поролона (пенополиуретан) толщиной 6.0±0.5 мм, плотностью 60±3 кг/м³. Каждый ботинок должен иметь по 7 пар петель для шнурков (текстильные ленты, шириной 10.0–14.0 мм), 6 металлических крючков с защитным покрытием, закрепленных металлическими заклепками. Сзади — петля из ленты с вертикальной прострочкой. Шнурки изготовлены из прочного синтетического химического волокна, обеспечивающего легкое и быстрое шнурование. Диаметр — 5.0 мм. Концы шнурков термообработаны (прозрачная оболочка) во избежание расплетания. Длина — 160–170 см. Все детали верха ботинка соединены двойной строчкой, прочность не менее 115 Н/см, за исключением клапана язычка, самого язычка и пришиваемой на него детали. Масса пары ботинок размера 43 — 800 г * 2 (±5%). Мыс и задник изнутри усилены термопластичным материалом: мыс — толщиной 1.3–1.5 мм, задник — 1.8–2.0 мм. Остаточная деформация мыса и задника — не более 1.0 мм по ГОСТ 9135. Все детали сшиваются синтетической нитью. Подошва двухслойная — из полиуретана и износостойкой резины. Крепление подошвы к верху осуществляется методом литья. Прочность склеивания подошвы не менее 90 Н/см (ГОСТ 9292). Вшитая стелька изготовлена из нетканого материала (поливинилацетат), толщиной 2.0±0.5 мм, состав — полиэстер 85±5%, полипропилен 15±5%. Съемная стелька анатомической формы, дышащая, двухслойная, толщиной 3.0±0.5 мм: 1-й слой — износостойкий нетканый материал (полиэстер 100%, поверхностная плотность 120±20 г/м²); 2-й слой — нетканый волокнистый материал (полиэстер 100%, плотность 400±30 г/м²); для герметизации швов мембранных деталей внутренней части берцев используется двухкомпонентная лента толщиной 22.0±1.0 мм. Состав: 1 компонент — трикотажная ткань (100% полиамид); 2 компонент — пленка (100% полиуретан); Общая поверхностная плотность: 210±15 г/м². Размеры

			готового изделия: Высота ботинка измеряется изнутри — от верхнего края до подошвы: 150–200 мм (для размера 43, допустимое отклонение ±5.0 мм). Физико-химические показатели: Влажность по ГОСТ 938.1: 10.0–16.0%; Оксид хрома по ГОСТ 938.3: 10.0–16%; Экстрагируемые вещества (без полимеров), % ГОСТ 938.5: 3.7–10.0%; Предел прочности при растяжении, МПа ГОСТ 938.11: ≥ 1.4; Удлинение при напряжении 10 МПа ГОСТ 938.11: 25.0–40.0%; Паропроницаемость, % / мг/см²•ч ГОСТ 938.17: ≥ 25% / ≥ 5.0; Устойчивость краски к сухому трению: ≥ 4 балла (ГОСТ 938.29); Состав ткани — полиамид 100% (ГОСТ ISO 1833); Износостойкость — не менее 400 циклов (ГОСТ 18976); Нетканый слой — 100% полиэстер (ГОСТ Р 57027). Размерный ряд: 37–47. Упаковка: Минимум трехслойные гофрированные коробки по 8–10 пар. Каждая коробка должна быть маркирована (этикетка не менее 8×15 см), с указанием наименования товара, количества, размеров, поставщика и производителя. Гарантии: Поставщик обязан гарантировать качество ботинок на весь срок эксплуатации (8 месяцев). В случае выхода из строя до окончания срока эксплуатации — обязательная бесплатная замена в течение 20 календарных дней со следующего рабочего дня после письменного уведомления заказчиком. При наличии соответствующего пункта в договоре Продавец предоставляет Гарантийное письмо или Сертификат соответствия от производителя или его представителя.